



CHILDREN
OF ARMENIA
FUND

Մամլո հաղորդագրություն

Հունիսի 13, 2022


ՔՈԱՖ-ն ու STARMUS-ը փոխըմբռնման հուշագիր ստորագրեցին գիտության ու արվեստի միջազգային փառատոնը Լոռու ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոն բերելու համար

Երևան — Հունիսի 11-ին ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Կորյուն Խաչատուրյանն ու STARMUS-ի հիմնադիր տնօրեն Գարիկ Իսրայելյանը ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր, որի հիմնական նպատակն է սեպտեմբերի 10-ին Լոռու ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնում STARMUS օր անցկացնել՝ այդ կերպ STARMUS գիտության ու արվեստի 6-րդ միջազգային փառատոնը հասանելի դարձնելով նաև Երևանից դուրս՝ Լոռու մարզում:

STARMUS միջազգային փառատոնը հիմնադրվել է 2011 թվականին աստղաֆիզիկոս Գարիկ Իսրայելյանի ու լեգենդար Queen խմբի կիթառահար, աստղաֆիզիկոս Բրայան Մեյի կողմից: Տարիներ շարունակ փառատոնը հանդիսացել է աշխարհահռչակ գիտնականներին ու արվեստի գործիչներին միավորող հարթակ՝ նպատակ ունենալով ներշնչել երիտասարդներին՝ բացահայտելու գիտության աշխարհը: «STARMUS VI. 50 տարի Մարսի վրա» խորագրով 6-րդ ամենամյա փառատոնն անց է կացվելու Հայաստանում սեպտեմբերի 5-10-ը:

«STARMUS-ը Լոռու ՍՄԱՐԹ կենտրոն բերելով՝ մենք հաստատում ենք, որ այս փառատոնը միայն մեկ վայրում չէ. այն ամենուր է, ուստի եթե անգամ չլսչին հնարավորություն կա փառատոնը հասցնելու նաև Հայաստանի գյուղեր, մենք, իհարկե, պետք է անենք: Այս ամենի շուրջ էլ մենք միավորում ենք ջանքերը ՔՈԱՖ-ի հետ՝ STARMUS-ը հասցնելով Լոռիի», - նշում է Գարիկ Իսրայելյանը:

Ստորագրված փոխըմբռնման հուշագիրը հավաստում է գյուղերի երեխաների շրջանում գիտության ու արվեստի շուրջ հետաքրքրության բարձրացմանը նպաստելու ՔՈԱՖ-ի ու STARMUS-ի մտադրությունը: «STARMUS օր ՍՄԱՐԹ-ում» միջոցառմանը, որ հազեցած է լինելու երաժշտական կատարումներով, պանելային քննարկումներով, ներառելու է պլանետարիում, աստղադիտում, գյուղատնտեսական ապրանքների տոնավաճառ, հրավիրված են լինելու հյուրեր Հայաստանից ու արտերկրից: Միջոցառման մասնակիցների շարքում են լինելու նաև արվեստի գործիչներ, գիտնականներ, Նոբելյան մրցանակակիրներ:



CHILDREN
OF ARMENIA
FUND

«STARMUS օր ՍՄԱՐԹ-ում» միջոցառումն անցկացվում է STARMUS-ի հետ միասին ՔՈԱՖ-ի ու Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) համատեղ «Լոռին՝ քո հաջորդ ուղղությունը» նախագծի շրջանակներում:

«Ջայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Ջայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Ջայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնախնամում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Ջայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 707,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին:

STARMUS VI միջազգային փառատոնի մասին

STARMUS միջազգային փառատոնը կապված է Ստիվեն Յոնիսկի, Բրայան Մեյի, Ալեքսեյ Լեոնովի և աշխարհահռչակ այլ հայտնի անունների հետ: Այն 2011 թվականից անցկացվել է Թեներիֆե կղզում (Կանարյան կղզիներ, Իսպանիա), հետագայում նաև Լորվեգիայում, Շվեյցարիայում: Փառատոնը միավորում է գիտությունը, կրթությունը, արվեստն ու տեխնոլոգիաները եւ նպատակ ունի հանրայնացնելու գիտությունը մարդկության համար արվեստի միջոցով:

STARMUS փառատոնը համարվում է միակն աշխարհում, որ նման մասշտաբի միջոցառումներ և խոսնակներ է ունենում: Փառատոնի շրջանակներում անցկացվող միջոցառումները տարբեր են և ընդգրկում են թե՛ դասախոսություններ ու համերգներ, և թե՛ գիտական ճամբարներ, կլոր-սեղաններ, որոնք նպատակ են ունենում հանրայնացնելու գիտությունը և հասանելի դարձնելու այն լայն շրջանակների համար՝ հատկապես ուսանողների ու երիտասարդության:

STARMUS փառատոնի շրջանակներում է շնորհվում նաև աշխարհահռչակ գիտնական Սթիվեն Յոնիսկիի հեղինակավոր շքանշանը (մեդալը), որը ճանաչում է գիտության հանրայնացման գործում ներդրումը: